ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍՎԱՐ

ԹԵՄԱ Սովորողների գիտական աշխարհայացքի ձևավորման խնդիրները

Կազմեց՝ Սվետլանա Աղաբեկյան Ալյոշայի
(անուն, ազգանուն, հայրանուն)

<<Ա. Հայրապետյանի անվան Կապանի թիվ 6 հիմն. դպրոց>> ՊՈԱԿ
(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ
(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3
ԳԼՈՒԽ 1. Աշխարհայացքի կառուցվածքային բաղադրամասերը----------6
1.1.Գիտելիք, հայացք, համոզմունք----------6
ԳԼՈՒԽ 2. Աշխարհայացքի ձևավորման ուղիներն ու միջոցները----------9
ԳԼՈՒԽ 3. Սովորողների աշխարհայացքն ըստ տարիքային փուլերի----------17
ԴԱՍԻ ՊԼԱՆ----------21
Եզրակացություն----------25
Գրականության ցանկ ----------26
Հավելված ----------27

Ներածություն

Աշխարհայացքի ձևավորումը անձից պահանջում է ոչ միայն հայացք նետել աշխարհին, այլ դիտածը, զննածը վերացարկել:

Աշխարհայացքի ձևավորումը մարդուց պահանջում է պատկերացնել առարկան, երևույթը, այսինքն՝ ընկալման ընթացքում հիշողության մեջ մտապահել ընկալված երևույթը, առարկան, դրանց իմաստը: Աշխարհայացքի ձևավորումը նաև պահանջում է սինթեզել առարկաները, երևույթները: Գիտելիքների խորապես յուրացումը և կայունացումը գիտական աշխարհայացքի ձևավորման հիմքն են:

Աշխարհայացքը նաև հայացք է այս արևի տակ բնակվող մարդու վրա: Այն պահանջում է ըմբռնել, հասկանալ մարդու՝ հասարակության մեջ գրաված տեղը, դիրքը, նրա գործունեության բովանդակությունը և այլն:

Եթե մարդն ունի ձևավորված աշխարհայացք և չի ղեկավարվում դրանով, ապա դա աշխարհայացք չէ: Աշխարհայացքի և գաղափարախոսության միջև կա էական տարբերություն: Գաղափարախոսությունն ունի մեկ գաղափար:Օրինակ՝ կոմունիստական գաղափարախոսության հիմնական գաղափարը <<կոմունիզմի կառուցում>> էր: Մինչդեռ աշխարհայացքը հայացքների, համոզմունքների միասնական,ամբողջական համակարգ է: Ի տարբերություն գաղափարախոսության, աշխարհայացքը ձևավորված կայուն հայացքների, համոզմունքների համակարգ է, որն էլ պետք է գիտական աշխարհայացքի ձևավորման համար:

Յուր. ուսումնական առարկա, յուր. գիտություն ունի իր աշխարհայացքը:

Նշանակում է՝ ամեն մի ուսումնական առարկա, ամեն մի գիտություն ունի իրեն հատուկ աշխարհայացքը:

Հետազոտության արդիականությունը

Աշխարհայացքը փիլիսոփայական, սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական հայացքների համակարգ է; Դրանց ամբողջությունն է; Աշխարհայացքը հասարակական ու անհատական գիտակցության միջուկ է, որի ձևավորումը մարդու /դպրոցականի/ մեջ պարտադիր է;

Աշխարհայացքը <<աշխարհ>> և <<հայացք>> բառակապակցությունն է; Այսինքն՝ հայացք նետել աշխարհին; Սակայն ոչ թե նրա մեկ հատվածի վրա, այլ աշխարհի կենդա- նի ու անկենդան բնության վրա; Այսինքն՝ հայացք աշխարհի վրա ամբողջությամբ:

Երբ ասում ենք հայացք աշխարհի վրա ամբողջությամբ, նկատի ունենք, որ այդ հայացքն ակտիվ է ու կապ ունի մարդու մտածողության, բանականության, գիտակցության հետ; Նշանակում է՝ առանց դրանց ակտիվ գործադրման, չի կարող ձևավորել մարդու աշխարհայացքը:

Հետազոտության նպատակը

1. Կարողանան հայտնաբերել ուսումնասիրվող առարկայի, երևույթի ու դրանց տարրերի միջև եղած կապերը, դրանք համադրել տեսական մտածողության մակարդակում, վերացականից անցնել դեպի կոնկրետ, որն էլ հիմնականն է ու առանցքայինը;

2. Կարողանան պրակտիկայում, կյանքում կիրառել յուրացրած, իմաստաորված, ընդհանրացված գիտելիքները;

Հետազոտության գիտական վարկածը

Միջառարկայական կապերի առկայության դեպքում կունենան ճկուն մտածողությամբ բազմակողմանի զարգացած սովորողներ;

Հետազոտության խնդիրները

1. Աշխարհայացքը այնպես ձևավորել, որ սովորողը կարողանա դիտածը, զննածը վերացարկել;

2. Սովորողների մեջ ձևավորել աշխատելու այնպիսի մեթոդներ, որ նրանք ինքնուրույն կարողանան բացահայտել միջառարկայական կապերի գոյությունը և դրանց օգտակարությունը նոր նյութի յուրացման գործում:

Հետազոտության մեթոդները

Օգտագործվել են մանկավարժական-հետազոտական, տեսական և փորձարարական մեթոդներ. գրականություն, գործնական մեթոդներ, խաղային տեխնոլոգիաներ, ցուցադրական – զննական, համագործակցային, նախագծային մեթոդներ:

Աշխարհայացքի պլանը

Կարելի է առանձնացնել աշխարհայացքի ձևավորման մոտավոր պլանը, որը կարող է ծրագրի դեր կատարել; Այդ պլանը կարող է արտահայտվել ուղղաձիգ կամ հորիզոնական կտրվածքով; Եվ մեկը, և մեկը ցույց են տալիս աշխարհայացքի ձևավոր ման հաջորդականությունը;

ՈՒղղաձիգ պլանի կտրվածքն արտահայտվում է հետևյալ ձևով.

Աշխարհայացք	**պատրաստակամություն**
Գիտելիք	**ունակություն**
Հայացք	**գործողություն**
Համոզմունք	**արարք**

Նշված պլանի ձևը կարելի է արտահայտել նաև հորիզոնական կտրվածքով:Այսպես՝

Աշխարհայացք – գիտելիք – հայացք - համոզմունք-պատրաստակամություն – ունակություն – գործողություն/ կամ արարք/:

Աշխարհայացքի պլանի նշված երկու ձևերն ունեն նույն իմաստը, այն է՝ թե անձի աշխարհայացքի ձևավորումն ինչ հաջորդականություն, զարգացում ունի:

Այսպիսով, վերը նշված պլանների կտրվածքները կարող են դպրոցականի աշխարհա յացքի ձևավորման <<բանաձևեր>> լինել:Օրինակ՝ ուղղաձիգ պլանի համաձայն, գիտական աշխարհայացքի ձևավորումը ենթադրում է գիտելիքներ, հայացքներ, դրանց վերածումը համոզմունքների, ապա լինել պատրաստակամ՝ այս կամ այն գործողությունը կատարելու կամ գործունեությունը ծավալելու համար: Եթե դրանք բոլորը հասունացած են և ակտիվ գործողության մեջ են, նշաանակում է՝ անձի աշխարհայացքը ձևավորված է:

Հետազոտության կառուցվածքը

Կազմված է ներածությունից, 3 գլխից, դասի պլանից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից:Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային բովանդակության 22էջ:

ԳԼՈՒԽ 1 ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԸ

1.1 Գիտելիք, հայացք, համոզմունք

Աշխարհայացքի կառուցվածքի բաղկացուցիչ մասերն են՝ **գիտելիքը, հայացքը, համոզմունքը, պատրաստակամությունը, արարքը:**

Գիտելիքը բնական և հասարակական երևույթների արտացոլումն է մարդու ուղեղում: Հոգեբանները գիտելիքը համարում են իրականության մոդել: Ըստ նրանց՝ գիտելիքը մարդու կողմից ընկալված և հիշողության մեջ մտապահված մտապատկեր – ների, հասկացությունների, մտքերի համակարգ է:

Կան տարբեր տեսակի գիտելիքներ, օրինակ՝ բացարձակ ճշմարիտ, էմպիրիկ, տեսական, առօրեական գիտելիքներ և այլն: Բացարձակ են այն գիտելիքները, ո – րոնք ապացուցված են: Էմպիրիկ գիտելիքները փորձնական, հատվածային գիտելիքներն են: Տեսական գիտելիքները գիտական գիտելիքներն են, պրակտիկայում՝ ստուգված: Այն գիտելիքները, որոնք վերաբերում են գիտակցությանը, կենցաղա – յին առօրեական ոլորտներին, կարող են գործել այն հասկացություններում, մտահանգումներում, վարկածներում, տեսություններում, որոնք արտացոլում են օբյեկտիվ իրականության առավել օրինաչափ կապերը և հարաբերությունները:

Աշակերտի աշխարհայացքի ձևավորման համար կարևորը տեսական գիտելիքներն են, քանի որ դրանք իրականությունն արտացոլում են խորությամբ ու ամբողջությամբ:

Աշխարհայացքի կառուցվածքում, որպես գիտելիքների բաղադրամասեր, հան – դես են գալիս նաև էվրիստիկական բնույթի գիտելիքներ, որոնք անձին ընձեռում են նոր փաստեր, նոր օրինաչափություններ որոնելու և հայտնաբերելու, <<հայտնագործություններ>> կատարելու հնարավորություն:Մինչդեռ էմպիրիկ գիտելիքները միա – կողմանի են, լրիվ չեն: Հետևապես դրանք չեն կարող կատարել այն գործառույթները,

որոնք հատուկ են տեսական գիտելիքներին: Այսպիսով, աշխարհայացքն ընդգրկում է գիտելիքների որոշակի համակարգեր, որոնք ճշգրիտ կերպով արտահայտում են գիտական իմացության կառուցվածքը:

Աշխարհայացքի կառուցվածքում, բացի գիտելիքներից, որպես բաղադրամասեր հանդես են գալիս հայացքն ու համոզմունքը: Դրանք մարդու ներքին դիրքորոշմանն անցած գիտելիքներն են: Որպեսզի գիտելիքները վերածվեն համոզմունքների, դը – բանք պետք է ներթափանցեն զգացմունքների ու ապրումների ոլորտ:

Հայացքն անձի՝ բնական, հասարակական երևույթների, առարկաների մասին դա տողություններն ու գնահատումներն են: Հայացքը կարող է լինել մակերեսային, նեղ, լայն, խոր, գիտական, ոչ գիտական և այլն: Եթե անձը երևույթի, առարկայի մասին ունի մակերեսային դատողություններ ու գնահատումներ, ապա այս դեպքում ասում ենք՝ նրա հայացքը մակերեսային է: Հակառակը կլինի՝ լայնը, խորը: Իսկ եթե անձը երևույթի ծագումը, ձևավորումը, զարգացումը խոր վերլուծության է ենթարկում, իր դատողությունները, գնահատումները հիմնավորում է համապատասխան օրինակներով ու փաստարկներով, ձևակերպում իր մտահանգումներն ու եզրահանգումները, այս դեպքում կարելի է ասել՝ նրա հայացքը գիտական է: Կամ եթե անձն ինքնուրույնաբար քննարկում ու պատճառաբանում է, թե ինչու քանակական փոփոխությունները դուրս գալով չափի սահմաններից անցում են կատարում դեպի որակական փոփոխությունները ու դրանք հիմնավորում էիր դատողություններով ու գնահատումներով, ապա այսպիսով նա նույնպես հաստատում է ձևավորված հայացքներ ունենալու փաստը:

Համոզմունքը գիտական աշխարհայացքի ավելի բարդ և ավելի էական բաղադրամասն է: Համոզմունքի ձևավորման համար հիմք են հանդիսանում ճշգրիտ, տե - սական գիտելիքները, գիտական ընդհանրացումներն ու մեթոդաբանական գաղա – փարները: Համոզմունքը և հայացքը փոխկապակցված են: Համոզմունքի մեջ արտահայտվում է դպրոցականի հուզական, հոգեբանական ձգտումը դեպի գործունեություն: Համոզմունքի ձևավորման մեջ մեծ են անձի եռանդի, հետաքրքրությունների, կամքի դերը, դրանց դրսևորումները: Առանց համոզմունքի դժվար է իրագործել նպատակը:

Աշխարհայացքի կառուցվածքի բաղադրամասերը՝ **գիտելիքը, հայացքը, համոզ-մունքը,** փոխկապակցված են, դրանցից յուր. պայմանավորում է մյուսի գոյությունը, և կամ՝ մեկը մյուսի համար ծառայում է որպես հիմք:

Աշակերտի աշխարհայացքի ձևավորումը կախում ունի նրա անհատականութ – յունից: Աշխարհայացքի ձևավորման մեջ մեծ դեր են խաղում նրա ներքին բնությունը, տրամադրվածությունը, պատրաստակամությունը, առաջադրված նպատակին հաս-նելու վճռականությունը: Դրան օգնում են համառությունն ու կամքը: Կամքը, համոզ – մունքների ու զգացմունքների միասնության ու զուգակցության մեջ՝ դպրոցականին մղում է հիմնավորված գործողությունների, արարքների:

Սովորողների աշխարհայացքի ձևավորման համար մեծ է հատկապես մեթոդա – բանական գաղափարների և գիտական ընդհանրացումների դերը: Մեծ արժեք ունեն հատկապես այն գաղափարները, որոնց մեջ ավելի խոր և ավելի մանրակրկիտ են բացահայտված իրականության ներքին օրենքները:

ԳԼՈՒԽ 2. Աշխարհայացքի ձևավորման ուղիներն ու միջոցները

Սովորողների աշխարհայացքի ձևավորման համար մեծ է կրթության բովանդակության դերը: Որպես միջոցներ կարևոր նշանակություն ունեն ուսումնական առարկանե րը:

Սովորողների գիտական աշխարհայացքի ձևավորման համար, բացի դասերից, կա րևոր դեր կարող են խաղալ արտադասարանային ու արտադպրոցական միջոցառում ները, դպրոցում գործող խմբակները, պարապմունքները, լրատվական միջոցներով հաղորդվող տեղեկությունները, առօրյա կյանքը, իրականությունը, աշակերտների հա ղորդակցումները, փոխհարաբերությունները շրջապատի և ուրիշ մարդկանց հետ, կյանքի բոլոր ոլորտներում ակտիվություն դրսևորելու ընդունակությունները:

Դպրոցականների գիտական աշխարհայացքի ձևավորման գործում մեծ դեր են խաղում ապացույցը, տրամաբանական համոզվածությունը, տեսական եզրահան – գումները և այն փաստարկումներն ու մտահանգումները, որոնք կրում են աշխարհա- յացքային բնույթ: ՈՒստի ուսուցիչը պետք է առաջնորդվի մանկավարժական հետև - յալ պայմաններով.

1. Ուսումնական նյութը շարադրել փայլուն օրինակների ու փաստերի վրա: Ա – պացուցել, հիմնավորել բացատրածը:Ավելին ասել, քան ասված է դասագրքերում: Նոր նյութի հաղորդմանը մասնակից դարձնել աշակերտներին:
2. Ուսումնական նյութը մեկնաբանելիս ցուցաբերել դիալեկտիկական մոտեցում, հենվել նրա օրենքների ու կատեգորիաների վրա:
3. ՈՒսումնական նյութի բացատրությանը, պարզաբանմանը տալ մեթոդաբանական, գաղափարական ուղղվածություն:
4. ՈՒսումնական նյութի մեջ բացահայտել պատմականության դերը, այդ նպա – տակով բերել համապատասխան համոզիչ օրինակներ ու փաստարկումներ:
5. Սովորողների մեջ արթնացնել բոլոր հարցերն ինքնուրույնաբար պարզաբանելու, բացատրելու, հասկանալու, իմաստավորելու, ընդհանրացնելու ձգտում:

6. ՈՒսումնական նյութը հաղորդելիս օգտվել միջառարկայական, միջգիտական կապերից:
7. ՈՒսումնասիրվող նյութի նկատմամբ ցուցաբերել հուզական մոտեցում:
8. ՈՒսումնասիրության ենթակա նյութի շարադրանքը կապել կյանքի, աշխատան քի և պրակտիկայի հետ: Այդ նպատակով ձեռքի տակ ունենալ համապատաս- խան նյութեր:
9. Դասի ընթացքում ամեն կերպ ապահովել աշակերտների ակտիվությունը,լսել նրանց կարծիքները, տեսակետները, իմանալ այս կամ այն հարցի վերաբերյալ նրանց համոզմունքները, մտահանգումներն ու եզրահանգումները:

Աշխարհայացքը անձնավորության բնութագիրը որոշող կարևոր որակ է: **Աշխարհա-յացքը լինելով մարդու ընդհանրացված գիտելիքների, իդեալների, համոզմունքների, արժեքային գնահատման և մոտիվացիայի օրգանական միասնություն, հանդես է գա-լիս որպես անձնավորության ամենաբարձր ուղղվածության ենթակառույցի միջուկ, բնութագրում է մարդու գիտակցության և ամբողջ հոգեկան բովանդակության զարգաց ման մակարդակը, կատարում է գործունեությունն ու վարքը որոշող ֆունկցիա, մոտի- վացնում, դետերմինացնում և ուղղորդում է մարդու գործունեությունը, կայունություն և ուժ է հաղորդում նրան:**

Մի շարք մանկավարժական և հոգեբանական՝ ուսումնասիրություններում առաջ է քաշվում աշխարհայացքից զուրկ մարդու գոյության հնարավորությունը:

Ա. Պ. Չեխովի հայտնի հերոսն ունի ամուր համոզմունք, ուժեղին քծնել, թույլին՝ խը- փել:

Դաստիարակության խնդիրը անձնավորության աշխարհայացքի դրական որակ-ների ձևավորումն է:

Անձնավորության աշխարհայացքի ձևավորումը սկսվում է նրա օնտոգենեզի բա-վական վաղ շրջանում, նրա կողմից գիտակցության, խոսքի, փորձի, գիտելիքների ձեռքբերմանը զուգընթաց և համապատասխան:

Այս տեսանկյունից անձնավորության աշխարհայացքի ձևավորումը պետք է համարել հասարակական մշակույթի և հասարակական աշխարհայացքի յուրացման արդյունք:

Հասարակական աշխարհայացքի սուբյեկտը՝ կրողը, մարդկային իրական հանրությունն է / ազգ, ժողովուրդ, դասակարգ, սերունդ և այլն/: Որպես հասարակական աշխարհայացքի որոշիչ դերի ապացույց կարելի է բերել պատմական տարբեր ժամանակաշրջաններում մարդկանց աշխարհայացքին բնորոշ՝ ընդհանուր, գծերի գոյության փաստը:

Հասարակական աշխարհայացքը ինքնին միատար չէ: Նրանում առկա են խոր դիալեկտիկական հակասություններ:

Հասարակական աշխարհայացքը ավելի ծավալուն և հարուստ է, սակայն չի բացառվում, որ անհատի աշխարհայացքը հակադրվի տիրող հասարակական աշխարհայացքն, առաջ անցնի նրանից, արտացոլի նորն ու խթանի մարդու գիտակցության և հասարակական աշխարհայացքի հետագա զարգացումը:

Դաստիարակչական ներգործությունների կազմակերպվածությունն ու բովանդակությունն են որոշում անձնավորության աշխարհայացքի տիպական բնութագիրը:

Հոգեբանական և մանկավարժական գրականության մեջ տարբերակված են աշխարհայացքի երեք հիմնական տիպեր.

ա/ Առօրեական աշխարհայացք, որը ձևավորվում է առօրյա նեղ, հաճախ միայն անձնական փորձի և ընդհանրացումների հիման վրա:

բ/ Գիտական աշխարհայացքի ձևավորումը պահանջում է հատուկ մանկավարժական աշխատանք: Փաստական գիտելիքների մեծ պաշարը դեռևս ինքնին չի ապահովում գիտական աշխարհայացքի ձևավորումը: Գիտական աշխարհայացքի ձևավորման հիմնական ուղին ուսուցումն է:

Գիտական աշխարհայացքը բնորոշվում է հետևյալ հիմնական առանձնահատկություններով.

. Գիտական աշխարհայացքի հիմքը կազմող դրույթները ապացուցական են / ապացուցված են, հնարավոր է ապացուցել, ձգտում են ապացուցման/:

Գիտական վարկածների մասին գիտելիքները գիտական աշխարհայացքի կարևոր բաղադրիչներ են:

. Գիտական աշխարհայացքին բնորոշ է իրականությունը բարեփոխելու, մարդու կյանքը երկրի վրա ավելի երջանիկ դարձնելու բարոյական պահանջը:

. Գիտական աշխարհայացքին բնորոշ է կատարելագործվելու, լրացվելու, իր և ուրիշների հայացքները քննադատորեն վերանայելու միտումը:

Գիտական աշխարհայացքի ձևավորման պահանջը յուր. աշխարհի ժողովրդավարական պետության կողմից ստանում է օրենսդրական հիմնավորում:

գ/ Կեղծ կամ հակագիտական աշխարհայացքը նույնպես կարող է **ձևավորվել հատուկ կրթության և դաստիարակության միջոցով:** Հաճախ կեղծ աշխարհայացքի ձևավոր- ման մեթոդը լինում է գիտական:

Գիտական աշխարհայացքի հիմնական բաղադրիչները ընդհանրացված գիտելիքները, համոզմունքներն ու իդեալներն են: Գիտելիքների ընդհանրացումը յուր. ուսումնական առարկայի հատուկ դաստիարակչական խնդիրն է, բխում է դաստիարակող ուսուցման սկզբունքից և առաջին հերթին իրականացվում է սովորողների գիտական աշխարհայացքի ձևավորմամբ:

Համոզմունքը մարդու գիտակցության, արժեքային դիրքորոշման և իդեալների միասնությունն է, որը վերածվում է գործունեության կայուն սկզբունքի: Համոզմունքների ձևավորումն անցնում է չորս հիմնական փուլերով.

ա/ Համոզմունքների հիպոթեզային գոյության վիճակ: Գաղափարի կատեգորիկ մերժումը սանի /ունկնդրի/ կողմից բացառում է համոզմունքի ձևավորման հնարավորությունը: Այն կարող է սկսվել, երբ գաղափարը դրվում և ընդունվում է որպես հնարավոր ենթադրություն՝ հիպոթեզ:

բ/ Երկրորդ փուլը կարելի է անվանել կարծիքի գոյացման փուլ: Այս փուլի բնորոշ հատկանիշն այն է, որ սանը հակվում է դեպի գաղափարը: <<Կարծում է, որ ճիշտ է, սակայն դեռևս լիովին համոզված չէ>>, այսինքն՝ գաղափարը նրա գիտակցության մեջ դեռևս հստակված, հիմնավորված, ապացուցված և փորձարկված չէ: Հետևա- բար շարունակվում է այդ գաղափարի ստուգման, խորացման և հիմնավորման ուղի- ների ակտիվ որոնումը:

/ Երրորդ փուլը հայացքների ձևավորման փուլն է, երբ տեսականորեն սանի համար ամեն ինչ պարզ է, և նա ինքը կարող է ցույց տալ գաղափարի ճշմարտացիությունը, ընդունում է գաղափարը, սակայն այն դեռևս նրա գործունեության մոտիվ և ուղե-

ցույց չի դարձել, կյանքում չի փորձարկվել: Այս փուլի արդյունքն անվանում են <<համոզմունք մտքի ոլորտում>>:

դ/ Չորրորդ փուլը համոզմունքի դրսևորման և ամրապնդման փուլն է: Ի. Մ. Կրասնոբաևը առաջարկում է համոզմունքների ձևավորման երեք փուլեր.

1. Համոզմունքները առկա են, բայց լիովին կայուն չեն:
2. Համոզմունքները ավելի կայուն են, սակայն լիովին չեն հասունացել:
3. Համոզմունքները լիովին կայուն են:

Համոզմունքների վերջին փուլի բնութագիրը կարելի է դիտել որպես համոզմունքների ձևավորվածության չափանիշներ, որոնք հետևյալներն են.

1. Համոզմունքի բովանդակության հստակ իմացություն:
2. Համոզմունքն արտահայտվում է հատուկ բանաձևով/սահմանում, բնութագիր/:
3. Առկա է խոր վստահություն տվյալ գաղափարի ճշմարտացիության վերաբերյալ, որը հիմնված է տրամաբանական ապացույցների վրա:
4. Համոզմունքի հիմքում առկա է անձնավորության սեփական կենսափորձը: Այն անցել է փորձարկման ճանապարհ:
5. Առկա է իր համոզմունքները պաշտպանելու պատրաստակամություն: Համոզմունքը անձնավորության գործունեության կայուն սկզբունք է:
6. Իսկական գիտական համոզմունքները նախապաշարմունքներ չեն: Մարդը միշտ պատրաստ է քննադատորեն վերանայել իր համոզմունքները և հրաժարվել դրանցից:
7. Համոզմունքները կազմում են միասնական, տրամաբանական համակարգ, այսինքն՝ աշխարհայացք:

Աշխարհայացքի տիրապետման տարիքային հնարավորությունները: Աշխարհայացքային ընդհանրացումների վերլուծության խորությունն ու աստիճանը չեն կարող նույնը լինել ուսուցման տարբեր փուլերում:

Գոյություն ունի տեսակետ, որի համաձայն ուսուցման սկզբնական փուլում իբր կարելի է սահմանափակել փաստերի հասարակ կուտակումով: Տարրական դասարաններում գոյություն ունի սկզբունքային հնարավորություն բացահայտելու այն, ինչ տալիս է ընդհանուր օրենքների իմացություն, որոնց ենթակա է ամեն մի շարժում ու զարգացում: Կրտսեր դպրոցականների հասկացողությանը լրիվ մատչելի են աշխարհայացքային բնույթ կրող բնության ու հասարակության երևույթների մեջ որոշ էական

կապեր ու կախումներ: Դրանց վերաբերում են բնության սեզոնային փոփոխությունների, աշխարհի նյութական միասնության և նրա մշտական զարգացման, սոցիալական հակասությունների ու դասակարգային պայքարի, սոցիալիստական հեղափոխության մեջ կոմունիստական կուսակցության դերի, գիտության ու կրոնի անհամատեղելիության և այլնի մասին տարրական պատկերացումները:

ՈՒսումնասիրելով գիտությունների հիմունքների համակարգված դասընթացը, դեռահասները կատարում են ռեալ իրականության առարկաների ու երևույթների ավելի խոր վերլուծություն, նրանց մեջ գտնում նմանություն ու տարբերություն, փոխադարձ կապի ու պատճառակցական պայմանավորվածության գծեր, սահմանում հասարակական-պատմական պրոցեսի օրինաչափություններն ու շարժիչ ուժերը, հանգում ինքնուրույն աշխարհայացքային եզրակացությունների: Դեռահասության տարիքի հրատապ պահանջմունքը ինքնահաստատման ձգտումն է: Այդ պահանջմունքի բավարարումն ընդարձակում է դեռահասի հաղորդակցման շրջանը, խթանում հասարակական-քաղաքական, բարոյական ու գեղագիտական իդեալների ձևավորումը:

Պատանեկության տարիքում դպրոցականները հասնում են ֆիզիկական ու հոգեվոր հասունության, որը որոշում է նրանց պատրաստակամությունը գիտական աշխարհայացքի՝ իր ամբողջ ծավալով ու խորությամբ յուրացմանը: Մտածողության փիլիսոփայական ուղղվածությունը, իրականությամբ նկատմամբ իմացական պահանջմունքը բարձր դասարանցիների մեջ ամուր հիմք են ստեղծում բարձր մակարդակի ընդհանրացվածության ֆունդամետալ մեթոդաբանական գաղափարների, կայուն հայացքների ու համոզմունքների ձևավորման համար, որոնք ապահովում են աշխարհում կողմնորոշվելու ընդարձակությունը, գործունեության ու վարքի սկզբունքները:

Է. Ի. Մոնոսզոնի կարծիքով աշխարհայացքի ձևավորվածության մակարդակի գընահատումը պետք է ներառի հետևյալ հիմնական բնութագրերը.**1.**այն կարևորագույն հասկացությունների, օրենքների, գիտության տեսությունների օպտիմալ յուրացումը, որոնք վճռորոշ նշանակություն ունեն բնության, հասարակության ու մտածողության զարգացման պրոցեսների էությունը հասկանալու համար, **2.**ուսումնասիրվող նյութի, նրա աշխարհայացքային բովանդակության նկատմամբ կայուն, գիտակցված անձնային վերաբերմունք, ժամանակակից միջազգային և ներքին հասարակական- քա-

ղաքական կյանքի երևույթների նկատմամբ կուսակցական, դասակարգային մոտեցում, **3.**դպրոցականների պատրաստակամությունը պայքարելու հանուն կոմունիզմի իդեալների, **4.**ամենօրյա գործունեության ու վարքի մեջ կոմունիստական համոզվածության դրսևորում,**5.**կոմունիստական աշխարհայացքին ոչ համապատասխան արտահայտությունների դեպքերի հաշվառում ու վերլուծություն: Աշխարհայացքի ձևավորման պրոցեսը պայմանավորված է մի շարք հատուկ կազմակերպված մանկավարժական պայմանների իրականացմամբ:

Միջառարկայական կապերի աշխարհայացքային ֆունկցիաները: Աշակերտների մեջ գիտական աշխարհայացքի ձևավորման պրոցեսն ապահովող միջոցների ու պայմանների ամբողջության մեջ կարևոր դեր է պատկանում ուսուցման պրոցեսում ուսումնական առարկաների միջև փոխադարձ կապերի հաստատմանը: Արտացոլելով գիտական գիտելիքների ու իմացության դիալեկտիկական բնույթը, միջառարկայական կապերն ապահովում են նրա կազմակերպման այս կամ այն տարրերի կամ առանձին կողմերի պահպանումը ամբողջի, որպես համակարգի փոփոխության, այսինքն, նրա մի վիճակից մյուսին անցման դեպքում: Միջառարկայական կապերի իրագործումը հնարավորություն է տալիս միևնույն երևույթը տեսնել տարբեր տեսակետներից, նրա մասին ստանալ ամբողջական պատկերացում, <<կապակցում է բոլոր գիտությունները միասին մի ընդհանուր նպատակով, նրանց միջև ստեղծում վիթխարի ուժի ներքին կապ>>:

Գիտակցության, զգացմունքի և գործունեության միասնությունը: <<Ամեն մի հարա- բերություն,- գրել է Ս. Լ. Ռուբինշտեյնը,- հոգեբանորեն հանդես է գալիս զգացմունքի կամ ձգտման, կամ գաղափարախոսապես ձևավորված գնահատման դատողության ձևով: Միևնույն հարաբերությունը արտահայտություն է գտնում, թե՛ զգացմունքի, թե՛ կամքի և թե՛ մտածողության ոլորտում՝ դա ոչ թե <<ֆունկցիոնալ>>, այլ <<անձնա- յին>> գոյացում է:

Վերլուծական- համադրական գործունեության ցանկացած արդյունքի մեջ պարունակվում են թե՛ գիտելիքը և թե՛ գործունեության եղանակը: Դրանք իմացության միասնական պրոցեսի տարբերկողմեր են, բայց այդ պրոցեսում առաջատար դերը պատկանում է գիտելիքներին: Գիտական գիտելիքի կառուցվածքում առանձնացվում է երկու մակարդակ՝ էմպիրիկ և տեսական: Էմպիրիկ գիտելիքը հատվածային է,

միակողմանի, ոչ լրիվ: Տեսական գիտելիքը իրականության իմացության բարձրագույն արդյունքն է:

Աշխարհայացքային հայացքներն ու համոզմունքները <<իմացած>> ու <<հասկացված>>, ինչ որ բան չեն , այլ անձի ներքին դիրքորոշմանն անցած գիտելիքներ են:

Ինտելեկտուալի և հուզական-կամայինի հետ միասին աշխարհայացքի կազմի մեջ մտնում է գործուն-պրակտիկ բաղադրիչը:

Մանկավարժի սոցիալական ու մասնագիտական դիրքորոշում: Դաստիարակի անձ շատ բան է նշանակում դաստիարակության գործում: Այն ամբողջապես հենվում է ու- սուցչի նկատմամբ աշակերտների վրա: <<Այդ իդեալական պատանեկան հավատը, - ընդգծել ԷՆ. Ա. Դոբրոլյուրովը,հեշտացնում է ուսուցչի գործողությունները և նրա օրինակը դարձնում բավարար: Բայց վայ այն ուսուցչին, որն իր անզգույշ վարքով, աշակերտների առջև իր կրքերի դրսևորմամբ վերացնում է այն հմայքը, որով նա երևում էր նրանց աչքում: Հենց որ բարոյական վստահությունը կորցված է կամ սասանված թեկուզ և փոքրիշատե, իսկուններթ ուսուցչի խոսքը կորցնում է իր ուժը>>:

ԳԼՈՒԽ 3. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԻ

Սովորողների գիտական աշխարհայացի ձևավորումը կարելի է իրագործել՝ ըստ կրտսեր , դեռահասության և պատանեկության տարիքների:

Տարրական դասարաններում հիմք ընդունելով ուսումնական առարկաների ընձեռած հնարավորությունները, կրտսեր դպրոցականներին կարելի է գաղափար տալ բնության և հասարակության մեջ գործող օրենքների մասին, որոնց ենթակա են ամեն մի շարժում ու զարգացում:

Դեռահասության տարիքում աշխարհայացքի մասշտաբները լայնանում են: Դրա համար նպատակավոր պայմաններ են ստեղծում ուսումնական ծրագրերը, գիտությունների հիմունքների համակարգված դասընթացները, որոնք իրագործվում են բոլոր ուսումնական առարկաների համար շարադրված դասագրքերի միջոցով:

Սովորողների աշխարհայացքի ձևավորման համար կարևոր դեր կարող են խաղալ միջառարկայական, միջգիտական կապերը: Բնական, հասարակական երևույթներն իրենց արտացոլումն են գտնում ուսումնական առարկաներում և գիտություններում: Սակայն միևնույն երևույթը մեկ գիտության մեջ արտացոլված է մեկ այլ կողմով, մյուսի մեջ՝ այլ, տվյալ ուսումնական առրկային և գիտությանը համապատասխան: Իսկ որպեսզի ուսումնասիրվող նյութը դիտվի, ընկալվի, հասկացվի իր բոլոր կողմերով, այսինքն՝ ամբողջության մեջ, հարկավոր է հայտնաբերել նրա բոլոր կապերը:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ մեթոդաբանական հիմնարար գաղափարները ապացուցվում, հաստատվում են միջառարկայական, միջգիտական կապերի միջոցով:

Աշխարհայացքի ձևավորումը յուր. աշակերտի համար պարտադիր անհրաժեշտություն է: Այն գիտելիքների, հայացքների, համոզմունքների համակարգ է, որը պետք է ամեն օր, ամեն ժամ, <<Աշխարհայացքը նույնն է, ինչ կողմնացույցը ճանապարհորդի, հեռադիտակը՝ աստղագետի, մանրադիտակը՝ մանրէաբանի համար>>:

Աշխարհայացքի ձևաավորումը հատուկ խնդիր է դառնում **դպրոցի առաջին դասարաններից:** Այս տարիքում աշխարհայացքի բովանդակությունը կապվում է բնության, մարդկային հարաբերությունների մասին պարզ, սակայն լիովին ճշմարիտ ընդհանրացումների հետ: Կրտսեր դպրոցականի համար լիովին մատչելի են այն բարոյական, քաղաքական, պատմական, բնագիտական ընդհանրացումներն ու օրինաչա-

փոփոխությունները, **որոնք ոչ հազվադեպ կրտսեր դպրոցականի մոտ հասնում են փիլիսոփայական ընդհանրացման մակարդակի:**

Միջին դպրոցական տարիքում սովորողների աշխարհայացքի ձևավորումը ստանում է ավելի ու ավելի խորացող և ընդարձակվող բնույթ: Այն պայմանավորված է տարբեր ուսումնական առարկաների համակարգված յուրացման և դեռահասի խորացող հասարակական փորձի ու հարաբերությունների բնույթով:

Դեռահասի՝ հասկացություններով մտածելու կարողությունների զարգացումը աշխարհայացքի ձևավորման նոր որակական փուլ է:

Պատանեկան տարիքը կարելի է անվանել աշխարհայացքային զարգացման տարիք: Աշխարհայացքը դառնում է այդ տարիքի հիմնական նորագոյացություններից մեկը:

Տարիքային մանկավարժությունը մանկավարժական գիտության կարևոր ճյուղերից մեկն է և ուսումնասիրում է դաստիարակության և ուսուցման առանձնահատկությունները, երեխաների դինամիկ զարգացման մի փուլից հաջորդին անցնելու օրինաչափությունները:

Տարիքային մոտեցման սկզբունքը կարևոր է նաև զինվորական մանկավարժության տեսանկյունից, քանի որ պարտադիր զինվորական ծառայությունը սկսվում է 18 տարեկանից, որը սոցիալական հասունացման իրավականորեն ճանաչված սահմանն է հանդիսանում, սակայն իրականում անձնավորության զարգացման գործընթացը դեռևս շարունակվում է:

Տարիքային զարգացման սկզբունքը առաջարկում է կարևոր մեթոդոլոգիական պահանջ:

Երեխայի զարգացումը քանակական փոփոխություններից տանում է որակական հատկանիշների ձևավորմանը: Մանկավարժից և դպրոցից պահանջվում է.

1. ՈՒշադիր հետևել երեխաների տարիքային զարգացմանը և համապատասխան փոփոխություններ կատարել դաստիարակության խնդիրների բովանդակության մեթոդների, ձևերի, մանկավարժի վերաբերմունքի, հարաբերությունների և տակտի դրսևորումների մեջ:
2. Նախապես որոշելով երեխայի զարգացման վաղվա պահանջներն ու նրա ներքի պահանջմունքների դինամիկան՝ ստեղծել այդ պահանջմունքների դրսևորման համար պայմաններ և ուղղություն տալ դրանց: Երեխայի հասունացմանը

համապատասխան՝ փոփոխություններ կատարել դաստիարակի վերաբերմունքում:

3. Երեխայի արարքները գնահատելիս տարիքային մոտեցումը հնարավորություն է տալիս տեսնել նոր ձևով դրսևորվող դրական հատկանիշներ և աջակցել դրանց, խրախուսել երեխայի ներքին դիրքորոշման այն դրսևորումները, որոնք նպաստում են նրա հասունացմանը:
4. Երեխայի տարիքային զարգացման յուր. առանձնահատկություն, սկսած նորածնի՝ նոր տպավորություններ ստանալու պահանջմունքի անընդհատ ընդլայնվելու միտումից մինչև պատանեկան տարիքի ռոմանտիզմը, ապագային ուղղվածությունը, պետք է ուշադիր ուսումնասիրվի և հաշվի առնվի ոչ միայն տվյալ պահին, այլև երեխայի հետագա կյանքը կազմակերպելու հեռանկարի իմաստով:
5. Տարիքային զարգացման բնութագիրն արտացոլում է տիպային առանձնահատկությունները: Յուր. երեխայի զարգացումը բավական հեռու է գիտության տված մոտավոր բնութագրից / տարիքային զարգացման ամեն մի բնութագիր անպայման մոտավոր է/:
6. Դաստիարակը՝ որպես երեխային ճանաչելու գործիք, պետք է կիրառի նրա տարիքային զարգացման մասին գիտական մոտեցումները, սակայն չզլանա ուշադիր ուսումնասիրել նրա զարգացման ընթացքը, պարզել տիպային բնութագրից սանի զարգացման տարբերությունները և նրա հասունացման ընթացքի հնարավոր արգելակվածությունն ու խաթարվածությունը:
7. Տարիքային զարգացման առանձնահատկությունների հաշվառման կարևոր մեխանիզմ է երեխայի զարգացման սոցիալական իրադրության ուսումնասիրությունը և դրանում կատարված փոփոխությունների գնահատումը:

   Տարիքային զարգացման սոցիալական իրադրության հիմնական բաղադրիչնե ը հետևյալներն են՝

   - **զարգացման ներքին հնարավորությունները,**
   - **երեխայի գործունեության բնույթը,**
   - **ներքին դիրքորոշումը,**
   - **երեխայի ապրումների բնույթը,**
   - **սոցիալական այն կոնկրետ դերը, որ հատկացվում է տվյալ երեխային:**

8. Տարիքային զարգացման առանձնահատկությունների հաշվառումը պահանջում է ժամանակին փոխել երեխայի առաջատար գործունեության բնույթը, սոցիալականորեն ճանաչել նրա հասունացման փաստը, ընդարձակել նրա գործունեության և ինքնուրույնության սահմանները:
9. Տարիքային զարգացման սկզբունքի տրամաբանությունը պահանջում է երեխային ճանաչելու գործընթաց. Ուսումնասիրել և բացահայտել նրա անհատական առանձնահատկությունները, դաստիարակության համակարգը կառուցել այդ պահանջներին համապատասխան:
10. Տարիքային մոտեցման պահանջը բխում է նաև անձնավորության մոտեցման սկզբունքից և ավելի մեծ չափով իրականացվում է այդ սկզբունքի կիրառման մեխանիզմների շնորհիվ:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

<< Իշխանը>> 1-ին և 2-րդ մասեր /3 ժամ/

4-րդ դասարան

Դասի նպատակը- Կմասնակցեն ստեղծագործական- հետազոտական աշխատանքին: Կընթերցեն Սևանա լճի <<անձնագիրը>>, կկատարեն լրացումներ: Տեքստը կվերարտադրեն ստեղծագործաբար՝ փոխելով դեպքերի ընթացքը, նոր հերոսներ ավելացնելով:

Վերջնարդյունքները- Արտահայտիչ արտասանի տեքստը,պատմի պատմություններ՝ ներկայացնելով հիմնական գաղափարը:

Դասի ընթացքը՝ ԽԻԿ համակարգով

Խթանում

I քայլ:Աշխատանք դասանյութի յուրացումը նախապատրաստելու ուղղությամբ

-Երեխանե՛ր, մի փաքր պատմե՛ք՝ ի՛նչ ճամփորդության են մեկնել երեխաներն օդապարիկներով: Որտեղի՞ց են շարժվել, որտե՞ղ են եղել, ի՞նչ են տեսել…

Իմաստի ընկալում

II քայլ: Տեքստի բովանդակության կանխագուշակում

-Արարատյան դաշտից օդապարիկներն ուղևորվեցին դեպի Հայաստանի չքնաղ գեղեցկուհին՝ դեպի կապուտակ Սևանը: Ծանոթացե՛ք Սևանա լճի <<անձնագրի>> հիմնական տեղեկատվությանը: Էլ ի՞նչ գիտեք Սևանա լճի մասին: Լրացրե՛ք տեղեկատվությունը:

Անուն	Սևանա լիճ /Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով/
Գտնվելու վայրը	ՀՀ, Գեղարքունիքի մարզ
Չափսեր	երկարություն՝ 78կմ, լայնություն՝ 56կմ, մակերես՝ 1243 քառ. կմ, ամենամեծ խորություն՝ 100մ, միջին խորություն՝ 30մ
Ջրի տեսակ	քաղցրահամ
Բարձրություն	1916մ
Ընդունում է	28 գետ ու գետակ
Սկիզբ է առնում	Հրազդան գետը

III քայլ : Տեքստի բարձրաձայն ընթերցում ուսուցչի կողմից

-Երեխանե՛ր, երբ օդապարիկները վայրէջք կատարեցին Սևանի ափին, ուսուցիչը մի պատմություն պատմեց երեխաներին: Ես էլ ուզում եմ այդ պատմությունը ձեզ պատմել:

Քայլ IV;Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝ նախնական ընկալումը պարզելու նպատակով:

1 Հավանեցի՞ք պատմությունը: Ինչպե՞ս փոխվեց ձեր տրամադրությունը տեքստի տարբեր հատվածներում:

2 Ինչո՞ւ է պատմությունը վերնագրված <<Իշխանը>>:

3 Ինչպե՞ս էր կյանքն ընթանում լճում մինչև պայթյունը:

4 Ինչպե՞ս փոխվեց կյանքը լճում: Ինչո՞ւ մեկուսացավ Իշխանը:

5 Լիճը փրկելու համար ի՞նչ քայլեր ձեռնարկեցին մարդիկ:

6 Մարդկանց ծրագիրն աշխատե՞ց:

Քայլ V: Տեքստի ընթերցում սովորողների կողմից՝ առաջադրանքով

Սովորողներին բաժանել 4-5 հոգանոց խմբերի, յուր. խմբի տալ անհատական ձևաթուղթ:

Խմբի ներսում միմյանց շարունակելով՝ ընթերցե՛ք տեքստը՝ զուգահեռ լրացնելով աղյուսակը:

Օրինակ՝

Գետ ու գետակ	**Լճակ**	**Լճի բնակիչներ**	**Հյուրեր**
Ձկնագետ Գավառագետ Վարդենիս Կարճաղբյուր	Գիլլի	Իշխան Կարմրախայտ Կողակ Սուզաբաղ	Կարմրաթևիկ Ջրշուն Հավալուսն Ձկնկուլ Ջրարծիվ Բադ Սիգ Կարապ

Քայլ VI:Աշխատանք ընթերցողական կարողությունների զարգացման շուրջ

Ընթերցողական կարողությունների զարգացման նպատակով կարելի է կազմակերպել նախ՝ ընտրովի, այնուհետև դերերով ընթերցանություն:

Քայլ VII: Աշխատանք լեզվական նյութի շուրջ

Մինչև առաջադրանքներին անցնելը կարելի է կրկնել բառերի կազմությունը, խոսել արմատի, պարզ, բարդ և ածանցավոր բառերի մասին:

1 Խմբավորել հետևյալ բառերը և լրացնել աղյուսակը:

թագավորություն, ջրանցք, լճակ, անհանգիստ, կարմրակատար, ձուկ, ձագուկ, լիճ, հսկայական, տխրություն, դժբախտ

պարզ	**բարդ**	**ածանցավոր**

2 Բնագրից դուրս գրել Սևանա լիճը թափվող գետերի անունները: Որոշել բարդ բառերը և բաժանել բաղադրիչների: **Գետ** արմատով կազմել բարդ կամ ածանցավոր բառեր:

Քայլ IX: Տեքսի վերարտադրում

-Կարելի է կիրառել պատմելու տարբեր տեսակներ, մասնավորապես՝ դերերով և ստեղծագործաբար: Ստեղծագործաբար պատմելիս կարելի սովորողներին առաջադրել.

.պատմել՝ տարբեր հերոսների անունից /Իշխան, Գիլլի, Կարմրախայտ, Արփա, ջուր և այլն/

. պատմել՝ նոր դերեր ավելացնելով

. պատմել՝ փոխելով դեպքերի ընթացքը և այլն:

Քայլ IX: Ստեղծագործական- հետազոտական աշխատանք

Ստեղծագործական- հետազոտական առաջադրանքների օրինակներ

- Կարելի է սովորողներին բաժանել 4 խմբի և առաջարկել կատարել փոքրիկ ուսումնասիրություններ:

  1-ին խումբ: Ներկայացնել հաղորդում Սևանավանքի մասին:

  2-րդ խումբ: Ուսումնասիրեք և ներկայացրեք <<Արփա-Սևան>> նախագիծը:

  3-րդ խումբ: Ներկայացրեք հաղորդում <<Սևանը՝ ստեղծագործություններում և երգերում>>:

  4-րդ խումբ: Գրեք <<Տպավորիչ ճամփորդությունը>> վերնագրով շարադրանք:

Քայլ X: Առաջադրանք ինքնուրույն աշխատանքի համար

Համապատասխանեցնել դարձվածքը և բացատրությունը:

Դարձվածքներ	Իմաստներ
Ինչպես ձուկը ջրում	Շրջապատողներին շփոթեցնել, խորամանկել, շահադիտական նպատակով իրար խառնել իրադարձությունները:
Շատ ջրեր են հոսել	Իր միջավայրում, իր ոլորտում, ազատ է զգում իրեն, լավ անկաշկանդ:
Ձուր պղտորել	Օգտվելով ուրիշների դժվարությունից, շփոթմունքից, խառը վիճակից՝ շահ քաղել:
Պղտոր ջրում ձուկ որսալ	Շատ ժամանակ է անցել:

Կշռադատում

Անդրադարձ

Մեկնաբանել ոտանավորը.

Լիճ ես թեև,

Իմ Սևան

Բայց մեր սրտում

Դու և ծով ես,

Եվ օվկիանոս

Անսահման:

Քայլ X I:Ամփոփիչ մտքի մեկնաբանում:

Ինչու են դասագրքի հեղինակները կարծում, որ <<Սևանա լիճը մեր հրաշալիքնե-րից է, աշխարհի ամենագեղեցիկ լճերից մեկը, մեր հպարտությունն է, մեր հույսի ու լույսի աղբյուրը: Աչքի լույսի պես պահենք- պահպանենք այն>>:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխարհայացքը փիլիսոփայական, սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական հայացքների համակարգ է: Դպրոցականի մեջ աշխարհայացքի ձևավորումը պարտադիր է: Աշխարհայացքը կազմված է աշխարհ և հայացք բառերից և նշանակում է հայացք նետել աշխարհին: Աշխարհայացքի ձևավորումը անձից պահանջում է, որ դիտածը, զննածը վերացարկեն: Նաև պահանջում է պատկերացնել առարկան, երևույթը, այսինքն հիշողության մեջ մտապահել ընկալված երևույթը, առարկան: Երբ մարդն ունի ձևավորված աշխարհայցք և չի շարժվում դրանով, ապա դա աշխարհայացք չէ: Աշխարհայացքի և գաղափարախոսության մեջ կա տարբերություն: Գաղափարախոսությունը մեկ գաղափար ունի: Յուր. գիտություն, յուր. ուսումնական առար- կա ունի իր աշխարհայացքը:

Աշխարհայացքի կառուցվածքի բաղադրամասերն են՝ գիտելիքը, համոզմունքը և հայացքը: Գիտելիքը բնական և հասարակական երևույթների արտացոլումն է մարդու ուղեղում: Գիտելիքները լինում են էմպիրիկ և տեսական: Հայացքն անձի՝ բնական, հասարակական երևույթների մասին գնահատումներն ու դատողություններն են: Հայացքը լինում է խոր, լայն, նեղ մակերեսային, գիտական և ոչ գիտական: Համոզմունքը գիտական աշխարհայացքի ավելի բարդ և ավելի էական բաղադրամասն է: Համոզմունքը և հայացքը փոխկապակցված են:Գիտական աշխարհայացքի հիմնական բաղադրիչները ընդհանրացված գիտելիքները, համոզմունքներն ու իդեալներն են: Համոզմունքը մարդու գիտակցության, արժեքային դիրքորոշման և իդեալների միասնությունն է:

Սովորողների գիտական աշխարհայացքի ձևավորումը կարելի է իրագործել ըստ կրտսեր, դեռահասության և պատանեկության տարիքների:

Աշխարհայացքի ձևավորումը աշակերտի համար պարտադիր է: Այն գիտելիքների, հայացքների, համոզմունքների համակարգ է, որը պետք է ամեն ժամ, ամեն օր:

Այսպիսով, աշխարհայացքի ձևավորումը յուր. աշակերտի համար պարտադիր անհրաժեշտություն է: <<Աշխարհայացքը նույնն է, ինչ կողմնացույցը ճանապարհորդի, հեռադիտակը՝ աստղագետի, մանրադիտակը՝ մանրէաբանի համար>>:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ղույումչյան Գ. Ե., Մանկավարժություն, գիրք 2
2. Մանկավարժություն / Յու. Կ. Բաբանսկու խմբագրությամբ/ , 2-րդ մաս, Երևան <<Լույս>> հր. 1987:
3. Ամիրջանյան Յու. Ա. Սահակյան Ա. Ս. Մանկավարժություն Երևան 2005
4. Սահակյան Կ. Գ. ՈՒսանողների գիտական աշխարհայացքի զարգացման հարցը արդի պայմաններում, <<Մանկավարժական միտք>> ամսագիր, 2005:

ՀԱՎԵԼՎԱԾ